ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Գործ թիվ ԵԴ2/1150/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ԴՌՆՓԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26.03.2024թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Մ. Ստեփանյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «ԵՐՎԱԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ) հայցադիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ–ի հետ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ–ի ի պաշտոնե ներկայացուցիչ Հ. Մխեյանը 14.02.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարությանի՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերջինիս և «Երվանդա» ՍՊԸ–ի միջև 20.09.2023 թվականին կնքված թիվ «ՓԳՀԱՊՁԲ-23-23/-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը, ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել կատարել 20.09.2023 թվականին կնքված թիվ «ՓԳՀԱՊՁԲ-23-23/3-1» ծածկագրով պետական գնման պայմանագրով սահմանված իր պարտավորությունները, այն է՝ ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Մկրտչյանի 19.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Կրկին ներկայացված դիմումը մակագրվել է Մ. Ստեփանյանին:

Դատարանի 12.03.2024 թվականի որոշմամբ կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձվել է:

«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ի ի պաշտոնե ներկայացուցիչ Հ. Մխեյանը 20.03.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարությանի՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերջինիս և «Երվանդա» ՍՊԸ-ի միջև 20.09.2023 թվականին կնքված թիվ «ՓԳՀԱՊՁԲ-23-23/-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

Կրկին ներկայացված հայցադիմումը դատավոր Մ.Ստեփանյանին է հանձնվել 21.03.2024 թվականին:

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և ներկայացվում են Համակարգի միջոցով՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

Հայցվորը դատարանին հայտնել է, որ գնման գործընթացն իրականացվել է փակ մրցույթի միջոցով, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի հիման վրա պարունակում է պետական գաղտնիք:

Դատարանը, հիմք ընդունելով, որ գործը քննվում է գրավոր ընթացակարգով, որոշում է, որ դատական ակտը կհրապարակվի դռնփակության պայմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է

դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությանից պահանջել նշված ապացույցները, որոնք վերջինս պետք է դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ ու 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ–ի հետ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ, և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 08.05.2024 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով՝ դռնփակության պայմաններին համապատասխան:

2. **Պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությանից պահանջել 20.09.2023 թվականին կնքված թիվ «ՓԳՀԱՊՁԲ-23-23/-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծելու մասին որոշմանը վերաբերող փաստաթղթերը, որոնք պատասխանողը կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունն իրենից անկախ պատճառներով:**

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանողի կողմից ենթակա է կատարման այն ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**